

5.3. 2007թ. նոյեմբեր ամսվա հիդրոտեղևուքաբանական վիճակը Հայաստանում

Ըստ ՀՀ բնապահպանության նախարարության տեղեկատվության, նոյեմբերին օդի միջին ամսական ջերմաստիճանը տարածաշրջանների մեծ մասում եղել է նորմայից 0.4-1 աստիճանով ցածր:

Միջին տասնօրյակային ջերմաստիճանն առաջին տասնօրյակում եղել է բարձր նորմայից 0.5-1.5 աստիճանով, ՀՀ Սյունիքի մարզում՝ 2 աստիճանով, երկրորդ տասնօրյակում՝ ամենուրեք ցածր 0.5-1.3 աստիճանով, երրորդում՝ 1-3 աստիճանով ցածր:

Միջին առավելագույն ջերմաստիճանը Սյունիքի հովիտներում կազմել է +14 +15°C, Արարատյան դաշտավայրում և ՀՀ Տավուշի մարզում՝ +10 +12°C, Սյունիքի նախալեռներում և ՀՀ Լոռու մարզում՝ +8 +9°C, լեռնային շրջաններում՝ +3 +6°C:

Ամենաբարձր ջերմաստիճանը տարածաշրջանների մեծ մասում դիտվել է նոյեմբերի 2-7-ին և 17-ին: Սյունիքի հովիտներում գրանցվել է +26°C, Արարատյան դաշտավայրում՝ +17 +21°C, ՀՀ Տավուշի մարզում՝ +17 +20°C, Սյունիքի նախալեռներում և ՀՀ Լոռու մարզում՝ +15 +17°C, լեռնային շրջաններում՝ +10 +13°C:

Միջին նվազագույն ջերմաստիճանը լեռնային շրջաններում կազմել է -1 -5°C, ՀՀ Լոռու մարզում՝ -2 -3°C, Սյունիքի նախալեռներում՝ -3 +1°C, Արարատյան դաշտավայրում՝ +2 +3°C, ՀՀ Տավուշի մարզում՝ 0 +3°C, Սյունիքի հովիտներում՝ +1 +6°C:

Ամենացածր ջերմաստիճանը տարածաշրջանների մեծ մասում դիտվել է նոյեմբերի 25-27-ին և 29-30-ին: Լեռնային շրջաններում և ՀՀ Լոռու մարզում գրանցվել է -15 -19°C, ՀՀ Տավուշի մարզում և Սյունիքի նախալեռներում՝ -6 -10°C (ք.Սիսիանում՝ -17°C), Արարատյան դաշտավայրում՝ -6 -8°C և Սյունիքի հովիտներում՝ -1 -6°C:

Նոյեմբեր ամսվա ընթացքում տեղումների քանակը հանրապետության տարածաշրջանների մեծ մասում զգալիորեն գերազանցել է նորման: ՀՀ Լոռու մարզում այն կազմել է նորմայի 220-320%-ը, ՀՀ Տավուշի մարզում՝ 220-260%, ՀՀ Գեղարքունիքի մարզում՝ 170-270% (ք.Սևանում՝ 340%), Վայոց ձորի լեռներում, ՀՀ Շիրակի և Կոտայքի մարզերում՝ 150-220%, ՀՀ Սյունիքի մարզում և Արարատյան դաշտավայրում՝ 150-230% (ք.Արմավիրում (ՀՀ Արմավիրի մարզ)՝ 316%):

Նոյեմբերի 1-ին, 7-10-ին, 12-ին, 22-24-ին և 29-ին տարածաշրջանների մեծ մասում դիտվել է տեղումներ: Նոյեմբերի 7-ին լեռնային շրջաններում դիտվել է առաջին ձյունը:

Նոյեմբերի 3-ին, 9-ին, 11-12-ին և 28-ին ՀՀ Լոռու, Գեղարքունիքի, Տավուշի մարզերում և Արարատյան դաշտավայրում դիտվել է քամու ուժգնացում, արագությունը՝ 12-19 մ/վրկ, պոռթկումները՝ 16-28 մ/վրկ (28-ին Պուլկիսի լեռնանցքում (ՀՀ Լոռու մարզ)՝ մինչև 43 մ/վրկ): ՀՀ Տավուշի, Շիրակի, Վայոց ձորի մարզերում և Արարատյան դաշտավայրում առանձին օրեր դիտվել է մառախուղ, տեսանելիությունը՝ 50-500 մ: Նոյեմբերի 7-ին ք.Վանաձորում (ՀՀ Լոռու մարզ) դիտվել է ուժեղ անձրև, 23-ին ք.Քաջարանում և ք.Կապանում (ՀՀ Սյունիքի մարզ)՝ ուժեղ ձյուն:

Ձյան ծածկույթի բարձրությունը նոյեմբերի 30-ի դրությամբ լեռնային առանձին և նախալեռնային շրջաններում կազմել է 10-18 սմ (ք.Ջերմուկում (ՀՀ Վայոց ձորի մարզ)՝ 37 սմ, Որոտան գյուղում (ՀՀ Սյունիքի մարզ)՝ 33 սմ), ՀՀ Տավուշի և Լոռու մարզերում՝ 4-13 սմ:

Նոյեմբերին հանրապետության հյուսիսային և կենտրոնական շրջանների գետերի մեծ մասում միջին ամսական ելքերը կազմել են նորմաների 130-160%-ը, իսկ հարավային շրջանների գետերում՝ 80-100%:

Սևանա լճի մակարդակը նոյեմբերի 1-13-ն ընկած ժամանակահատվածում բարձրացել է 4 սմ-ով, որից հետո մինչև ամսվա վերջ՝ իջել 5 սմ-ով և 2007թ. նոյեմբերի 30-ի դրությամբ կազմել 1898.81 մ, որը 2006թ. նույն օրվա համեմատ բարձր է 54 սմ-ով: